ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

« 2 » ապրիլի 2025 թվականի N: 127 -Ա ք.Գյումրի

ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության 2025 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածը և ՀՀ Շիրակի մարզպետի 2022 թվականի հուլիսի 27-ի «Ֆինանսական օգնության տրամադրման գործընթացն իրականացնող աշխատանքային խմբի աշխատակարգը հաստատելու մասին» N:416-Ա որոշման դրույթները, հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ոլորտի հարցերի վարչության կողմից թվով հինգ դիմումների ուսումնասիրության վերաբերյալ եզրակացությունները.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի աշխատակազմի բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման «Այլ նպաստներ բյուջեից» հոդվածով նախատեսված ծախսերից սոցիալական աջակցության նպատակով դիմումատու քաղաքացիներին հատկացնել 145000 /մեկ հարյուր քառասունհինգ հազար/ Հայաստանի Հանրապետության դրամ միանվագ օգնություն՝ համաձայն հավելվածի:

2. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի աշխատակազմի ֆինանսական վարչությանը՝ օրենքով սահմանված կարգով ապահովել վճարումը:

Դ. ԱՌՈՒՇԱՆՅԱՆ

Իսկականի հետ ճիշտ է

Հավելված
Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի
2025 թվականի <<2>> մարտի-ի N127-Ա որոշման

Դրամական օգնություն ստացողների ցուցակ

N	Անուն, ազգանուն,	Հասցեն	Գումարի չափը /դրամ/
1	Սահակ Մովսեսյան	Քաղաք Գյումրի, Եսայան փողոց, տնակ 213/053	30000 /երեսուն հազար/ դրամ
2	Գոհար Խաչատրյան	Քաղաք Գյումրի, Մուշ 2 թաղամաս, շենք 10/1, բնակարան 7	25000 /քսանհինգ հազար/ դրամ
3	Գագիկ Մկրտչյան	Քաղաք Գյումրի, Մատնիշյան փողոց, տուն 141	20000 /քսան հազար/ դրամ
4	Բենիկ Չալյան	Քաղաք Գյումրի, Մուսայելյան փողոց, տուն 88/5	50000 /հիսուն հազար/ դրամ
5	Ասյա Հովհաննիսյան	Քաղաք Գյումրի, Մուշ թաղամաս, Հալաբյան փողոց, շենք 5/1, բնակարան 20	20000 /քսան հազար/ դրամ
	Ընդամենը		145000 /մեկ հարյուր քառասունհինգ հազար/ դրամ